ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №ՀԱ-ՄԱԾՁԲ-22/1

ք. Երևան 10 հունվար 2022 թ.

ԱՁ Ա.Թումասյանը՝ այսուհետև «ԿԱՏԱՐՈՂ», մի կողմից, և «Հայատոմ» ՓԲԸ-ն՝ այսուհետև «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ», ի դեմս գլխավոր տնօրեն Վ. Պետրոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

«ԿԱՏԱՐՈՂ»-ը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում վերանորոգել և սպասարկել «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»-ի համակարգչային և օրգ. տեխնիկան, իսկ «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»-ն պարտավորվում է վճարել դրա դիմաց:

2. Պայմանագրի գինը և վճարման պայմանները

Ծառայությունների ընդհանուր գինը որոշում են կողմերը՝ յուրաքանչյուր ամսվա վերջին, կազմելով փաստացի մատուցված ծառայությունների վերաբերյալ ակտ: Վճարումը կատարվում է համաձայն ակտի կազմված հաշիվ-ապրանքագրերով:

3. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

«ԿԱՏԱՐՈՂ»-ը պարտավոր է «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»-ին սույն պայմանագրով նախատեսված վերանորոգման ծառայությունները մատուցել տեղեկանալուց հետո 2 օրվանից ոչ ուշ՝ չհաշված շաբաթ և կիրակի օրերը:

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»-ն իրավունք ունի՝ «ԿԱՏԱՐՈՂ»-ից պահանջել մատուցելու պայմանագրին համապատասխանող որակի ծառայություններ:

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»-ն պարտավոր է՝

Սույն պայմանագրի համապատասխան կատարել վերանորոգված տեխնիկայի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Ստուգել վերանորոգված տեխնիկայի որակը և հայտնաբերած թերությունների մասին անհապաղ տեղեկացնել «ԿԱՏԱՐՈՂ»-ին:

Սույն պայմանագիրը բաղկացած է 1 էջից, կնքված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները և ստորագրությունները

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»	«ԿԱՏԱՐՈՂ»
«Հայատոմ» ՓԲԸ	ԱՁ Ա. Թումասյան
ք. Երևան, Ծով.Իսակովի պ. 50	ք.Երևան, Շիրազի 30շ., բն. 37
ՀՎՀՀ 01804548	ՀՎՀՀ 27863076
Հ/հ 11500682358300	Հ/հ 2052032184201001
«Հայբիզնես բանկ» ՓԲԸ ք.Երևան	Ինեկոբանկ, ք. Երևան
_____Վ.Պետրոսյան	_____Ա.Թումասյան